# Պարույր Սևակ

## Անձրևային սոնատ

(Հինգ նվագով՝ մինոր հնչականությամբ)

Ա. ՆՎԱԳ

Երբ աշնանային դաշտերի վրա
Կամ քաղաքային գորշ փողոցներում
Ամենքի կողմից գուցե մոռացված
Ինչ-որ անձրև է թախծում ինքն իրեն,
Երբ տխրությունն է ներս մտնում իմ տուն
Ու դառնում տանտեր,-
Կիսախելագար մտքեր են գալիս
Որ խտանում են իմ խեղճ գանգի մեջ,
Խտանում, ինչպես սերմերը՝ հասկում:
Ես միտք եմ անում,
Ա՛խ, եթե մեռնելն այնպես հեշտ լիներ,
Ինչպես ծնվելը...
Բայց մինչև անգամ թե այդպես լիներ՝
Կշահեինք մե՛նք,
Դարձյա՛լ - վերստի՛ն - կրկի՛ն - նորի՛ց մե՛նք,
Բայց ո՛չ մայրերը:
Բա մեղք չե՞ն նրանք...

Բ. ՆՎԱԳ

Երբ աշնանային դաշտերի վրա

Կամ քաղաքային գորշ փողոցներում
Ամենքի կողմից իզո՛ւր մոռացված
Ինչ-որ անձրև է թախծում ինքն իրեն,
Երբ տխրությունն է ներս մտնում իմ տուն
Ու դառնում տանտեր,-
Պարապ քայլերով պատից մինչև պատ՝
Կոշիկիս մոթով ու կրունկներով
Խուլ նվագում եմ հատակի վրա,
Որ տանտիրուհու ձեռքի է կարոտ,
Եվ այդ նվագին ունկ չդնելով՝
Հանկարծ միտք անում,
Թե շունն ինչո՞ւ է հաչում Լուսնյակի,
Սակայն ոչ երբեք Արևի վրա:
Եվ չգտնելով հարմար պատասխան,
Ավելին՝ նույնիսկ չըորոնելով,
Զգում եմ, թե ես ո՛նց եմ կարոտել
Ա՛յն ավազակին,
Որ կոչվում է շոգ:
Գ. ՆՎԱԳ
Երբ աշնանային դաշտերի վրա
Կամ քաղաքային գորշ փողոցներում
Ամենքի կողմից արդե՛ն մոռացված
Ինչ-որ անձրև է թախծում ինքն իրեն,
Երբ տխրությունն է ներս մտնում իմ տուն
Ու դառնում տանտեր,-
Աչքը, ակամա,
Ճամփորդության է դուրս գալիս հանկարծ,
Դիմացի շենքի
Զարդաքանդակված քիվի երկայնքով
Ճամփորդում այնպե՛ս զգույշ ու դանդաղ,

Ասես մրջյուն է
Եվ ոչ թե հայացք:
Ճամփորդում է նա քիվի երկայնքով,
Եվ հասկանում եմ ես լուսնոտներին:
Ու հանկարծ,-
Կյանքումս առաջի՜ն անգամ,-
Լուռ միտք են անում.
Լուսնային ախտով հիվանդներ թե կան,
Իսկ ինչո՞ւ չկան
Արևի ախտով տառապող մարդիկ,
Եվ դա չի՞ կապվում այն առեղծվածին,
Թե շունն ինչո՞ւ է հաչում Լուսնյակի,
Սակայն ոչ երբեք Արևի վրա...
Դ. ՆՎԱԳ
Երբ աշնանային դաշտերի վրա
Կամ քաղաքային գորշ փողոցներում
Ամենքի կողմից վաղո՜ւց մոռացված
Նույն այդ անձրևն է ինքն իրեն թախծում,
Երբ տխրությունը դարձյա՛լ իմ տան մեջ
Իրեն պահում է տատիրոջ նման,-
Գրասեղանից մի գիրք եմ վերցնում,
Որ՝ հետապընդված իմ իսկ մտքերից՝
Գեթ ապավինեմ էջերին նրա:
Վերցնում եմ և - ի՜նչ.
Խորհում ակամա,
Որ նույնիսկ գիրքը... նա էլ է նեղվում՝
Ընդմիշտ սեղմված ամուր կազմի մեջ...
Ե. ՆՎԱԳ
Երբ աշնանային դաշտերի վրա
Կամ քաղաքային գորշ փողոցներում

Ամենքի կողմից ընդմի՛շտ մոռացված
Նույն հին անձրևն է թախծում ինքն իրեն,
Եվ տխրությունը իմ ներկայությամբ
Տանը մեջ իրեն տանտեր է զգում.-
Էլ ի՞նչ է մնում,
Որ ես ինչ անեմ.-
Գլուխս եմ կողպում
Ու բաց եմ անում փակված բերանը.
- Է՛յ, ընկե՛ր երկինք,
Մի՛ խուլիգանիր,
Թե չէ՝ միլիցիա կզանգահարեմ:
Ձայնը չի՞ հասնում հեռու երկընքին,
Թե՞ միլիցիայից նա չի երկյուղում
Եվ բաց չի անում իր դեմքը ամպած.
Ամենքի կողմից իզո՛ւր մոռացված
Այդ նույն անձրևն է թախծում ինքն իրեն,
Իմ տուն ներս եկած տխրությունն անկոչ
Տանտիրությունն է դեռ շարունակում,
Ու ես, զայրագի՛ն,
Ու ես, ճարահա՛տ,
Քենը թափում եմ իմ խոհանոցի ծորակի վրա,
Որ բաց է եղել.
Ես խեղդելո՛ւ պես ծորակն եմ փակում:
Եթե անզոր եմ երկընքի հանդեպ,
Այս լիրբ ծորա՛կը թող լռի գոնե,
Որ... չատեմ ջուրը
Ու չկարոտեմ ա՛յն ավազակին,
Որ շոգ է կոչվում:

19.XII.1959թ.

Թիֆլիս